Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ ԹԻՎ 95-Ա և 96-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 95-Ա որոշմամբ համայնքի ղեկավարը փոխել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը, որի իրավասությունն օրենքով վերապահված է համայնքի ավագանուն (հիմք՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետեր):

Բացի այդ, որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման բովանդակությանը (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս): Համաձայն որոշման վերնագրի համայնքի ղեկավարը փոխել է հողամասի նպատակային նշանակությունը, մինչդեռ բովանդակության մեջ նշված է նաև հողամասի օտարման մասին:

Թիվ 96-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, համաձայն որի նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի):

Անհրաժեշտ է հղում կատարել նաև Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթներին կատարված հղումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին, իսկ 32-րդ, 37-րդ, 254-րդ, 283-րդ, 287-րդ, 298-րդ և 305-րդ հոդվածներին կատարված հղումները չեն համապատասխանում Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ և 287-րդ հոդվածներին կատարված հղումները սխալ են:

Որոշմամբ սահմանված տուգանքի չափը չի համապատասխանում նույն օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Որոշման եզրափակիչ մասում 23-րդ հոդվածի բառերից հետո գրառված կետի բառն անհրաժեշտ է փոխարինել 1-ին մասի 2-րդ կետի բառերով, իսկ 281-րդ հոդվածի բառերից հետո գրառված կետի բառը՝ մասի բառով հիմք՝ Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մաս:

Բացի այդ, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 9-ի թիվ 38-Ա որոշմանը կատարված հղումը սխալ է:

Որոշման 4-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Որոշման 6-րդ կետում 88-րդ հոդվածի բառերից հետո անհրաժեշտ է գրառել 1-ին մասի բառը:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
25.08.2021թ.